Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Արտադասարանական միջոցառումները որպես միջմշակութային հաղորդակցության ապահովման, դաստիարակչական խնդիրների լուծման միջոց:
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Աննա Բոյախչյան Վանիկի Մանկավարժ English /2/ 3, 4, 6, 7, 8, 9, 11, 12
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Կոտայքի մարզի Կամարիսի Ա.Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ kamaris@schools.am

Բովանդակություն

1) Ներածություն

2) Արտադասարանական միջոցառումները օտար լեզվից:

3) Արտադասարանական միջոցառումների կազմակերպման տարիքային առանձնահատկությունները

4) Եզրակացություն

5) Օգտագործված գրականություն

Ներածություն

Նպատակը և հետազոտական հարցը	Հմտությունների և կարողությունների զարգացումը արտադասարանական միջոցառումների միջոցով: Որքանո՞վ են արտադասարանական միջոցառումները նպաստում միջմշակութային հաղորդակցությանը և դաստիարակչական խնդիրների լուծմանը:
Թեմայի կարևորությունը և նշանակությունը Ձեր / թիրախային խմբի համար	Արտադասարանական միջոցառումները աշակերտների փորձն ու գործունեությունն են, որոնք ներառված չեն կրթական ուսումնական պլանի մեջ: Այս միջոցառումները կրթության կարևոր մասերից մեկն են կազմում: Ապացուցված է, որ արտադասարանական միջոցառումները նույնքան անհրաժեշտ են, որքան կանոնավոր դասերը, հմտությունները զարգացնելու համար: Ավելին, արտադասարանական միջոցառումները լավ

	հնարավորություն են տալիս աշակերտներին հասնելու իրենց ուսումնական նպատակներին: Աշակերտները հայտնաբերում և զարգացնում են իրենց հմտություններն ու կարողությունները այս միջոցառումների միջոցով՝ ձեռքբերումներ ունենալու համար: Չնայած արտադասարանական միջոցառումների և սովորողների ձեռքբերումների միջև կապը եղել է շարունակական, դրանց օգուտները ավելի բարձր կրթական ձեռքբերումներ ունենալու համար եղել են առաջնային: Արտադասարանական միջոցառումները դպրոցական բոլոր մակարդակներում ներկայացվում են տարբեր ձևերով, ինչպես օրինակ՝ սպորտ, ակումբ, բանավեճ, արվեստ, երաժշտություն, դպրոցական թերթ: Արտադասարանական միջոցառումները կուղղորդեն ավելի բարձր կրթական հաջողությունների և կօգնեն սովորողներին ավելի լավ միավորներ հավաքել քննություններին և թեստերին: Դրանք նաև ոգեշնչում են սովորողներին և դրական կապ ստեղծում աշակերտների ու դպրոցի միջև: Երբ սովորողները դրական են տրամադրված դեպի դպրոցը, նրանք ավելի վստահ են գիտելիքների ընդունման հարցում: Այդ միջոցառումները հնարավորություն են տալիս աշակերտներին հասակակիցների հետ բարիդրացիական կապ հաստատել, և երբ

	մասնակցում են դրանց, աճում է նաև նրանց դասին ներառվածությունը: Արտադասարանական միջոցառումները ապահովում են սովորողներին գործնական միջավայր և այդ գործնական հնարավորությունները հնարավորություն են տալիս, որ նրանք ձեռք բերեն ինքնավստահություն: Նրանք ավելի լավ հնարավորություն են ունում ցուցադրել իրենց հմտություններն ու ունակությունները միջոցառումների ընթացքում: Արտադասարանական միջոցառումները ազդում են սովորողների դրական վերաբերմունքի վրա դեպի ուսումն ու դպրոցը: Այն աշակերտները, ովքեր իրենց լավ են դրսևորում այս միջոցառումների ընթացքում, զարգացնում են ինքնագնահատականը՝ իրենց նվաճումների շնորհիվ: Այս ինքնագնահատումը գլխավոր դեր է խաղում հետագա ձեռքբերումների համար, ինչպես նաև արտադասարանական միջոցառումները միջավայր են ստեղծում աշակերտների համար օգտագործել իրենց գիտելիքները, որ ձեռք են բերել դպրոցում: Աշակերտներին հնարավորություն է տրվում գործադրել իրենց գիտելիքները «իրական կյանք» իրադրություններում: Իսկապես, ուսուցանելու եւ սովորելու աշխատանքը ժամանակատար պրոցես է և կրթական փոխգործակցություն ուսուցչի եւ

	աշակերտի միջև: Կրթական փոխգործակցության նպատակը գործ ունի երեք ասպեկտների հետ՝ ● Ճանաչողական ● Աֆեկտիվ ● Հոգեբանական Հաջողության հասնելու համար այս երեք նպատակները պահանջում են ուսուցչից առավելագույն աշխատանք՝ փոխանցելու նյութը, տեխնիկան եւ մեթոդները, դասարանի ղեկավարությունը եւ այլն: Ավելին, ուսուցչից պահանջվում է լինել ավելի ստեղծագործող, որպեսզի աջակցի ուսումնական գործունեությանը, ինչպես նաև ուսուցչից պահանջվում է արտադասարանական միջոցառումներ դասերից հետո: Արտադասարանական միջոցառումները, ինչպես վերևում նշվեց, գործունեություն է, որոնք իրականացվում են դասաժամերից դուրս: Դրանք իրականացվում են դպրոցում կամ դպրոցից դուրս: Օտար լեզու սովորելու համար կարող են լինել արտադասարանական անգլերեն լեզվի բանավեճեր, ժուռնալիստական խմբակներ կամ թատերական խմբակներ, որոնք հնարավորություն են տալիս ձեռք բերել ավելի սահուն արտասանություն, ինչպես նաեւ համագործակցություն: Կարճ ասած արտադասարանական միջոցառումները

	աջակցում են սովորողների ուսումնական գործունեությանը: Փորձը ցույց է տալիս, որ այն աշակերտները, որոնք հաճախ են մասնակցում աշակերտական խորհուրդներին, անգլերեն բանավեճերին, լեզվական լաբորատոր աշխատանքներին, նաև ակտիվ մասնակցություն են ունենում դասերին:
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	❖ Հմտությունների և կարողությունների զարգացում
Արտադասարանական միջոցառումները օտար լեզվից	❖ Արտադասարանական աշխատանքները կառուցում են հետեւյալ հիմունքներով. 1. Կյանքի իրավիճակների հետ կապված հիմունքներ 2. Սովորողների համագործակցային ակտիվության հիմունքներ 3. Սովորողների լեզվի տիրապետման մակարդակի հաշվի առնում և արտադասարանական աշխատանքների առավելություն օտար լեզվի ուսուցման ընթացքում

	4. Սովորողների տարիքային առանձնահատկությունների հաշվի առնում 5. Կոլեկտիվ, անհատական և խմբային աշխատանքային ձևերի հիմունքներ 6. Արտադասարանական աշխատանքների կազմակերպման և անցկացման մեջ միջառարկայական կապերի հիմունքներ Արտադասարանական միջոցառումները ուսուցչի աշխատանքի կարևոր մասերից մեկն է: Այսպիսի պարապմունքներ անցկացնելը միշտ ունենում է դաստիարակչական ազդեցություն տարբեր տարիքի սովորողների համար: Արտադասարանական միջոցառումները պարապմունքներ կամ էլ կոլեկտիվ իրադարձություններ են, որոնք պետք է կազմակերպված լինեն անմիջականորեն ուսուցչի կամ էլ ուսումնական ինստիտուտի կողմից և ունենան դաստիարակչական բնույթ: Այսպիսի միջոցառումներին կարելի է վերագրել նաեւ խաղերը, արշավները, էքսկուրսիաները թանգարաններ և այլն: Ուսուցման այս տեսակի հաջողությունը և արդյունավետությունը շատ բանով կախված է մեթոդների ընտրությունից և դրանց օգտագործման ձևերից, բայց միևնույն

	ժամանակ արտադասարանական միջոցառումների ճիշտ կազմակերպման և անցկացման կարևորությունը չպետք է անտեսել: Յուրաքանչյուր ուսուցիչ գիտի, որ շատ հաճախ առարկայի նկատմամբ հետաքրքրություն կարելի է առաջացնել հենց արտադասարանական միջոցառում անցկացնելով կամ օրինակ, ինչ որ ձևով ազդելով ապագա մասնագիտության ընտրության հարցում: Արտադասարանական գործունեության մեջ ներգրավված շատ աշակերտների և ուսուցիչների ընդհանուր խնդիրն այն է, որ նրանք մեծ ու աշխատատար պատասխանատվություն են վերցնում իրենց վրա: Ուսուցիչը և աշակերտները կիսամյակից առաջ պետք է կազմեն ժամանակացույց, որը հավասարակշռում է դպրոցը, աշխատանքը, դպրոցից հետո գործունեությունը և տնային կյանքը: Բացի այդ, աշակերտի համար գործունեությունը պետք է լինի ավելի զվարճալի քան սթրեսային: Դպրոցական գնահատականները չպետք է տուժեն արտադասարանական գործունեության մեջ անցկացրած ժամանակից: Օտար լեզու սովորելու համար աշակերտները ամենաշատ ժամանակը անցկացնում են դասասենյակում: Նրանք գալիս են այդ դասերին, որպեսզի մոտ մեկ

	ժամ անցկացնեն նոր լեզու սովորելու և այն պատշաճ կերպով օգտագործելու համար: Դասարանում նրանք կարող են կենտրոնանալ միայն օտար լեզուն սովորելու վրա: Նույն սկզբունքով սա կարող է նշանակել, որ նրանք թողնում են իրենց անգլերենը դասարանում, երբ հեռանում են: Բայց ինչ կլիներ, եթե մեր աշակերտները լեզվի հետ շփվելու միջոց ունենային, նույնիսկ երբ նրանք դպրոցում չեն: Սա կմեծացնի նրանց ծանոթությունը լեզվին և կօգնի նրանց ինտեգրել լեզուն իրենց առօրյա կյանքում: Կան մի քանի մեթոդներ, որ ուսուցիչները կարող են խրախուսել աշակերտներին անել. ՖԻԼՄԵՐԻ ԴԻՏՈՒՄ Խրախուսեք աշակերտներին դիտել ֆիլմերը անգլերեն: Նախօրոք քննարկեք աշակերտների հետ ինչպես կարող են դիտել ֆիլմը ենթագրերով (սուբտիտրեր)՝ մեծացնելով իրենց հմտությունները բացահայտելու օտար լեզվի առանձնահատկությունները: ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ Ձևավորել գրքի/ընթերցանության խմբակ աշակերտների հետ: Յուրաքանչյուր շաբաթ (երկու շաբաթը մեկ, ամիսը մեկ անգամ) աշակերտներին տալ հինգ րոպե միմյանց

	պատմելու, թե ինչ գիրք են կարդացել օտար լեզվով և արդյոք խորհուրդ կտան այն մյուսներին կարդալ: ՃԱՇԿԵՐՈՒՅԹՆԵՐ Ուսուցումը բազմամշակութային միջավայրում տալիս է շատ հնարավորություններ կիսելու տվյալ ազգի և մշակույթի մասին ինֆորմացիան: Կարելի է կազմել օրացույց <<ճաշկերույթների>> համար, որտեղ աշակերտները պատրաստում են տվյալ ուսումնասիրվող երկրի ավանդական կամ հայտնի ուտելիքը իրենց դասընկերների համար: ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՅՔԵՐ Գրչընկեր լինելու գաղափարը կարելի է համարել մի փոքր հնացած: Բայց շատ աշակերտներ սիրում են միմյանց հետ շփվել կարճ հաղորդագրություններ գրելով: Կարելի է կազմակերպել և այլ դպրոցի աշակերտների բացել facebook- յան կամ whatsapp-ի խմբեր, որոնց միջոցով աշակերտները կարող են շփվել: ԱՄԵՆՕՐՅԱ ԼՈՒՐԵՐ Ներառել ամենօրյա նորությունների տեղեկագիր դասերի ընթացքում, որտեղ աշակերտները կարող են միմյանց տեղեկացնել ընթացիկ իրադարձությունների մասին: Սա կարող է լինել ժամանակ առ ժամանակ, այն պետք է խրախուսի

	սովորողին կարդալ լուրեր, որպեսզի կարողանան ներկայացնել: ❖ Արտադասարանական աշխատանքների անցկացման պայմանները. ▪ Կամավոր մասնակցություն ▪ Երեխաների նախաձեռնողական գործունեությունը ուսուցչի ուղղորդիչ դերի հետ միասին ▪ Նյութի հետաքրքիր և նոր լինելը ▪ Աշխատանքի ձևն ու մեթոդը ▪ Բոլոր անցկացվող միջոցառումների էսթետիկ կողմը ▪ Ճշգրիտ կազմակերպում և մանրակրկիտ պատրաստվածություն բոլոր պլանավորած միջոցառումների ▪ Սովորողների ակտիվության խթանում մանկավարժական մեթոդների միջոցով Այսպիսով, ինչ տեսակի արտադասարանական միջոցառուներ կան դպրոցում: Ամենատարածված տեսակներից են արտադասարանական խմբակները, ստուդիաները, գիտական ընկերությունները, առարկայական խմբակները, ցուցահանդեսները, հանրային տոները, էքսկուրսիաները, մրցույթներն ու օլիմպիադաները, կոնֆերանսները:

Ցանկացած արտադասարանական միջոցառում իր մեջ պարունակում է երեք հիմնական փուլ՝

- Նախապատրաստական փուլ
- Միջոցառման անցկացման փուլ
- Կատարվածի վերլուծում

Արտադասարանական միջոցառումների զարգացումները ժամանակի ծախս են պահանջում մանկավարժից պատրաստվելու համար տվյալ գործունեությանը: Չէ որ անհրաժեշտ է գտնել հետաքրքիր, իրական նյութ հանձնարարված թեմայի վերաբերյալ, որը ոչ միայն կհետաքրքրի մասնակիցներին, այլև չի թողնի նրանց անտարբեր:

Բացի այդ պետք է կոնկրետ պլանավորել միջոցառման բոլոր մասերը, փնտրել նյութերը եւ դրանց մատուցման մեթոդները, որոշել նաև անհրաժեշտ կահավորանքը՝ տեսողական և դիդակտիկ նյութերը:

❖ Արտադասարանական աշխատանքների նպատակը

- Գիտելիքների ընդլայնում և խորացում
- Օտար լեզվի տիրապետման ունակությունները կոմունիկացիոն գործունեության մեջ
- Սովորողի հետաքրքրության խթանում առարկայի ուսունասիրության մեջ

	▪ Անձի բազմակողմանի զարգացում, ներառյալ ինտելեկտուալ, կամային եւ հոգևոր ոլորտները Արտադասարանական միջոցառումների ինչ սցենարներ կարող է օգտագործել ուսուցիչը: Արտադասարանական միջոցառման սցենարը դա միջոցառման մանրակրկիտ բովանդակությունն է, ձևավորված գեղարվեստորեն և բացահայտող արտադասարանական միջոցառումների բոլոր տարրերը: Սցենարում պետք է բացահայտվի թեման և նպատակը, բոլոր տրամաբանական անցումները սցենարի մի մասից մյուսին: Սցենար գրելու գլխավոր պայմաններից մեկը կոնկրետացնել ընդհանուր թեման, գտնել եւ լուսաբանել խնդրահարույց կողմը, որը ամենաշատն է հուզում: Ցանկացած արտադասարանական միջոցառում, ինչպես կարգն է, վերաբերվում է որևէ կոնկրետ տոնի, հիշարժան օրվա կամ անձի, կամ էլ խնդրահարույց թեմայի: կարևոր է, որ արտադասարանական միջոցառման սցենարը համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկությունները: Միջոցառման սցենարը իր մեջ պետք է ունենա կոնկրետ սյուժեյի զարգացում, ընդ որում կոնֆլիկտը պարտադիր է: Առանց կոնֆլիկտի սցենարը

	այնքան էլ վառ չի բացահայտում միջոցառման բոլոր գաղափարները: Ցանկացած կարգի արտադասարանական միջոցառում անհրաժեշտ է, որ ուսուցիչը վերլուծի: Գոյություն ունի երկու տարբեր տեսակի վերլուծություններ՝ հիմնական եւ հոգեբանական-մանկավարժական: Առաջինում վերլուծվում են միջոցառման նյութի պարունակությունը, նրա դաստիարակչական ուղվածությունը: Երկրորդ տեսակը առաջին հերթին դիտարկում է պարապմունք մանկավարժական տեսանկյունից: Արտադասարանական միջոցառման վերլուծության սխեման հետևյալն է՝ 1. Գնահատել տվյալ իրադարձության թեմայի հիմնավորումը 2. Վերլուծել թեմայի նպատակն ու խնդիրները, և այն, թե որքանով էին դրանք հասանելի անցկացվող դասի ընթացում 3. Հաշվի առնել պարապմունքի անցկացման տեղն ու ձևը և ուշադրություն դարձնել, թե որքանով են դրանք համապատասխանում ընտրված թեմային: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է անցկացնի նաև անցկացված միջոցառման ինքնավերլուծություն: Դա տալիս է հնարավորություն գնահատելու, թե

	ինչքանով է արտադասարանական միջոցառումը հաջողվել, գնահատելու սեփական մանկավարժական հմտությունները և բացահայտելու պահերը, որոնք կարելի է շտկել, կամ էլ դրանց վրա հատուկ ուշադրություն դարձնել հաջորդ պարապմունքին պատրաստության ժամանակ: Ինքնավերլուծությունը խթանում է ինքնակատարելագործմանը և մոտիվացնում է բոլորի հետագա զարգացումը, այդ թվում նաև ուսուցչինը: Արտադասարանական միջոցառման անցկացումը մանկավարժի աշխատանքի կարևոր մասերից մեկն է, դա նաև դպրոցական կյանքի ամենահետաքրքիր մասերից մեկն է: Այն պահանջում է մեծ պատրաստվածություն, որպեսզի լինի արդյունավետ, սովորողներին հետաքրքիր և չթողնի անտարբեր բարձրացված թեմայի նկատմամբ, այլ ընդհակառակը՝ մոտիվացնի խնդրի հետագա ուսումնասիրման, քննարկման և իմաստ տալուն: Արտադասարանական միջոցառումները միշտ օժանդակում են երեխաների ստեղծագործական աճին:

Պարագրաֆներ/մասեր

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	1. Внеклассные мероприятия по иностранному языку 2. Yunus Yildiz, Ishik University, Department of Languages, Erbil, Iraq 3. Возростные котегории и внеклассные мероприятия 4. Конспект и презентация к внеклассному мероприятию
Օգտագործված մեթոդները, գործիքները	❖ Բեմականացում ❖ Երկխոսություն
Իրականացման ժամանակահատվածը	2022-2023 ուս. տարի
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Կրտսեր, միջին և ավագ դասարանի աշակերտներ
Արտադասարանական միջոցառումների կազմակերպման տարիքային	Մի քանի օտար լեզուների իմացությունը, այսինքն բազմալեզվությունը հասարակության համար ապահովում է արագ ինտեգրումը համաշխարհային հանրության քաղաքական, տնտեսական, մշակութային և կրթական տարածքում, իսկ

առանձնահատկություն-ները	անհատի բազմալեզվությունը հնարավորություն է տալիս անհատին ապահովել արագ և արդյունավետ ինտեգրումը հասարակության մեջ, ծանոթանալ համաշխարհային գիտական, հասարակական, տնտեսական, մշակութային տեղեկատվությանը, ինչպես նաև մեծացնում է ազատ տեղաշարժման իրավունքից օգտվելու գործնական հնարավորությունները: Տրիքային առանձնահատկությունները օտար լեզվի ուսուցման մեջ ի հայտ են գալիս ի սկզբանե: Մի բան է ուսուցանվող լեզվի հետ նախնական ծանոթացման, այնուհետև տարրական ուսուցման մեջ ներդնել սկզբնական տարրերը / պատկերների տեսքով, թվային համակարգով, պարզունակ արտահայտություններով/, այնուհետև այդ ամենը աստիճանաբար բարդացնել /նախադասությունների կազմում, պարզ երկխոսություններ, տեքստի ընկալում…/, մի այլ բան է արդեն ավագ դպրոցում նպատակաուղղված ուսուցումը, երբ լիարժեք ընկալում է, թե ինչ նպատակով է ինքը տվյալ դասընթացին և ինչ է տալիս այն իրեն: Նույն մոտեցումն ու վերաբերմունքն է նաև արտադասարանական միջոցառումների ընթացքում: Եթե կրտսեր

	դասարանների աշակերտներին ավելի շատ գրավում է տվյալ միջոցառման բնույթը, իրագործումը, բեմական եւ ցուցադրական երևույթները, ապա հավանական է, որ ավագ դպրոցի սովորողին ավելի շատ հետաքրքրում է գործընթացի պրոցեսը, նպատակը, փորձը /տվյալ օտար լեզվով միմյանց հետ շփվելու/: Եվ որ ամենակարևորն է, այն լրացուցիչ հնարավորություն է հաղթահարելու սխալներ գործելու ներքին վախը:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Արտադասարանական միջոցառումները օգտակար են այն բանով, որ նրանք օգնում են սովորողներին ստեղծել դրական վերաբերմունք հմտություններ զարգացնելու համար: Աշակերտները դառնում են ավելի արդյունավետ, երբ նրանք ընդգրկված են արտադասարանական միջոցառումների մեջ: Քանի դեռ սովորողները խրախուսվում են սովորել, նրանք կկարողանան ավելի շատ նվաճումների հասնել: Այս դասընթացներն ու միջոցառումները կարող են միեւնույն ժամանակ սովորողներին օգնել լավ տիրապետել օտար լեզվին: Այս գործողությունները օժանդակում են օտար լեզվի ուսուցման գործընթացում կիրառվող մեթոդներին եւ այն լեզվի զարգացման

	խթանման համար հարթակ է հանդիսանում սովորողների համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սովորողները, ովքեր մասնակցում են դպրոցից հետո մեկ կամ մի քանի միջոցառումների, ավելի քիչ են հակված հասակակիցների բացասական ճնշմանը և ունեն ինքնագնահատականի ավելի բարձր մակարդակ, քան այն երեխաները, ովքեր չեն մասնակցում: Ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ արտադասարանական գործունեությունը կարող է բարձրացնել սովորողների ակադեմիական առաջադիմությունը և հնարավորություն տալ նրանց հպարտանալու իրենց ձեռքբերումներով, հմտություններով ու կարողություններով: Այս միոցառումներին մասնակցությունը կարող է օգնել երեխային ազատվել հիասթափություններից, զարգացնել սոցիալական հմտությունները և բացահայտել տաղանդները, կարողությունները և հետաքրքրությունները: Իհարկե, վերը նշված մեթոդներից մի քանիսը հատկապես դպրոցում իրականացնելու համար գերադասելի է ունենալ համապատասխան կահավորանք և պայմաններ, ինչը ցավոք, առայժմ

	բացակայում են մեր շատ դպրոցներից: Ինչպես նաև կարևոր է, թե տարբեր տարիքային խմբերում սովորողները ինչպես են ընկալում ուսուցման այս տեսակի կազմակերպման գործընթացի կարևորությունը: Հայտնի է, որ կրտսեր տարիքի սովորողների հետ ավելի հեշտ է իրականացնել ցանկացած տեսակի գործունեություն: Նախ և առաջ, որովհետև փոքր են և հեշտ ղեկավարվող ու ուղղորդվող: Երկրորդ՝ ձգտում են սովորել, չնայած հստակ չեն պատկերացնում օտար լեզվին տիրապետելու մեծ դերն ու նշանակությունը իրենց չափահաս կյանքում: Միջին դասարաններում, անցողիկ, տարիքային խնդիրներով հարուստ տարիքում, ոչնչով չհետաքրքրվելու, շատ կարևոր խնդիրների նկատմամբ բացարձակ անտարբերությունն է գերիշխում: Ուսուցիչներից պահանջվում են մեծ հմտություններ և համագործակցություն աշակերտների հետ՝ մոտիվացնելով նրանց սովորելու գործընթացում: Բայց հատկապես այս տարիքի սովորողներին է առավելագույնս հետաքրքրում արտադասարանական միջոցառումների կազմակերպումը և իրականացումը: Նրանք ոգևորված ուզում

	են մասնակցել բեմականացումներում, դպրոցական խմբակներին և այլն, որն էլ հիմք է տալիս ուսուցչին <<օգտվել առիթից>> և լուծել ուսումնա-դաստիարակչական մի շարք խնդիրներ: Բարձր դասարանի աշակերտները (թե՛ ավագ դպրոցում և թե՛ միջնակարգ դպրոցում սովորող) մեծամասամբ հաղթահարում են այս անցողիկ փուլը և դառնում ավելի նպատակաուղղված, ավելի հասուն: Ծատերը հստակ պատկերացնում են, թե ինչ են ուզում և ինչ են անում կյանքում հաջողության հասնելու համար: Եվ հիմնականում այս տարիքում է, որ ստեղծվում են facebook-յան և whatsapp-յան ընկերությունները և շփումները, թեկուզ և օտար լեզվով:
Այլ տեղեկատվություն	

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	